ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2024 թվականի N: 564 - Ա ք. Գյումրի

ԲԱԿՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Բակուր Հովհաննիսյանի 2024 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նահապետավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Բակուր Հովհաննիսյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2024 թվականի նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ:

2. Բակուր Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Նահապետավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Հասմիկ Սարգսյանին:

Ա.ՄԱՐՏԻԿՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է